

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՅ ԲԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Գ. ՄԱՆՈՒՅԱՐՅԱՆ

Քաղաքագիտական մտքի տարրերը սկիզբ են առել քաղաքացիական հասարակության ձևավորմանը գուրզնթաց՝ տոհմատիրական կարգերի քայքայման, դասերի ու դասակարգերի կազմավորման, սեփականության ու քաշխման հարաբերությունների հաստատման, իրավական հարաբերությունների ու պետության առաջացման հետ: Սակայն իբրև գիտության առանձին բնագավառ այն ձևավորվել է 19-րդ դարի կեսերին ու զարգացման նոր փուլ թևակոխել 20-րդ դարում:

Թեև հասարակագիտական գիտությունների համակարգում խոթորոյալին իշխանության տարիներին մշակվեցին քաղաքագիտական առանցքային հարցեր, այնուամենայնիվ, իբրև գիտության առանձին բնագավառ, այն սկզբնավորվեց միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:

Լինելով աշխարհաքաղաքացիական գիտություն՝ քաղաքագիտությունը յուրաքանչյուր երկրում սերտորեն կապվում է ազգային ու տարածաշրջանային խնդիրների հետ, և նրա հետազոտության արդյունքները կիրառական նշանակություն են ստանում ավյալ երկրի ու տարածաշրջանի ժողովուրդների համար: Քաղաքագիտական ազգային դպրոցի առանձնահատկությունն այն է, որ այն ծրարակվում է ազգային հողի վրա, խառսխվում ազգային կեցության, ազգի ճակատագրի, ազգային գաղափարների ու իդեալների վրա:

Ինչպես հայ քաղաքագիտությունը, այնպես էլ հայ քաղաքագիտական մտքի պատմությունը հայագիտության նոր միայն սկսվող բնագավառ է: Նրա հետագա մշակման ու ամբողջացման համար դեռ շատ ջանքեր կպահանջվեն:

Ներկա ուսումնասիրության նպատակն է ուրվագծել հայ քաղաքագիտական մտքի պատմության զարգացման հիմնական փուլերը, որն ամեն մի դարաշրջանում ունեցել է իք տեսական ընդհանրացումը, քաղաքագիտական մտքի ուրույն որակը: Այդ ընդհանրացումներն ու որակները պարբերացման ենթարկելիս հենվել ենք հայ ժողովրդի պատմական ժամանակաշրջանների քաղաքական հաստատությունների, կրոնական, փիլիսոփայական հայացքների զարգացման ու փոփոխման սահմանագատման վրա, ինչը պատմական գիտության մեջ ընդունված է անվանել պարբերացում (պերիոդիզացիա): Յուրաքանչյուր ժողովրդի գիտության կամ մշակույթի պատմության փուլերը նախ և առաջ խառսխված են ավյալ ժողովրդի բուն պատմության վրա:

Հայոց պատմությունը պարբերացվել է տարբեր սկզբունքներով: Պատմաբանների մի մասը ելակետ է ընդունել ժամանակի գործոնը, մյուսները՝ արքայատոհմերը, ուրիշները՝ հասարակական-տնտեսական կացութաձևերը՝ և այլն: Պատմաախյր Մովսես Խորենացին, հիմք ընդունելով ժամանակը, հայոց պատմությունը քաժամել է երեք շրջանների՝ «ծննդաբանություն», «միջակ պատմություն» և «ավարտաբանություն»¹: Խորենացուն հետևել են Մ. Գարագաշյանը², Լեռն³ և ուրիշները:

¹ Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով, «Լրաբեր» (հաս. գիտ.), 1993, թիվ 4, Վ. Դիլոյան, Հայոց պատմության պարբերացման մի քանի հարցերի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, թիվ 3:

² Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1990:

³ Տե՛ս Մ. Գարագաշյան, Զննական պատմություն հայոց, մասն Ա, Կ. Պոլիս, 1880, էջ 3:

⁴ Տե՛ս Լեռ, Հայոց պատմություն, երկերի ժողովածու, հ. 1-4:

Ժամանակագրական սկզբունքով համաշխարհային պատմությունը քաժանվել է նախնադարյան հասարակության, հին աշխարհի, միջին դարերի, նոր դարի և նորագույն կամ արդի դարաշրջանի պատմության:

Միքայել Չամչյանը, հայոց պատմության պարբերացման հիմքում դնելով պետականության և արքայատոհմերի հերքափոխը, այն բաժանել է վեց փուլի³: Հայոց միջնադարի պատմությունը պարբերացման ենթարկելիս Հ. Մանանդյանը հետևել է Չամչյանին⁴:

Պատմության պարբերացման հիմքում կարելի է դնել նաև մարդկանց հանրույթի պատմական ձևերը՝ առիմ, ցեղ, ազգայն և ազգ, քաղաքակրթությունների հերքափոխը և այլն:

Այս բոլոր երկետները ճիշտ լինելով հանդերձ, մեր կարծիքով, միակողմանի են և չեն արտացոլում հասարակության զարգացման առանձին ժամանակահատվածների բոլոր կողմերը, օրինակափոխություններն ու առանձնահատկությունները:

Հասարակության պատմության պարբերացման մաքսիզմի անկյունաքարը հասարակական-տնտեսական կացութաձևի մասին ուսմունքն է, ըստ որի սահմանազատվում են նախնադարյան համայնական հասարակության, ստրկատիրության, ֆեոդալական, կապիտալիստական և կոմունիստական կացութաձևերը: Այս տեսական ընդհանրացումը Մաքսը կատարել է Եվրոպական երկրների պատմության հենքի վրա: Պարզ է, որ առանձին աշխարհամասերի ժողովուրդները պետք է ունենան իրենց պատմության առանձնահատուկ դասկարգումները:

Խոսելով հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, նա սպառել է բոլոր կացութաձևերը: Պատմագիտության մեջ տիրապետող կարծիքի համաձայն⁵, նախնադարյան համայնական հասարակարգը Հայաստանում տևել է մինչև մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջերս, ստրկատիրությունը՝ մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջերից մինչև մ. թ. 3-4-րդ դարերը, ֆեոդալականը՝ 5-րդ դարից մինչև 17-18-րդ դարերը, բուրժուականը՝ 19-20-րդ դարերը: 20-րդ դարում երկու անցում է կատարվել կապիտալիզմից սոցիալիզմին և սոցիալիզմից կապիտալիզմին:

Հայ քաղաքագիտական մտքի պատմության փուլերը խարսխված են հայոց պատմության այս պարբերացման վրա, սակայն նրա ընթացքի և առանձին մակարդակների կայացման վրա մեծապես ազդել են հայոց պատմության այնպիսի առանձնահատուկ գործոններ, ինչպիսիք են.

1. Արտաքին հզոր ուժերի անմիջական ազդեցությանը երկրի չափազանց անկայուն ու հարստփոփոխ վիճակը:
2. Աշխարհագրական դիրքի պատճառով համաշխարհային քաղաքակրթությունների անմիջական ազդեցությունը հայ ժողովրդի վրա:
3. Հայերի աշխարհով մեկ տիրված լինելը:

Բոլոր տնտեսական կացութաձևերը առաջիններից մեկը ոտք դրած հայ ժողովուրդը արաաքին քաղաքական աննպաստ փոփոխությունների պատճառով ոչ մի կացութաձև իր ավարտին չի հասցրել, և մենք, բնականաբար, ոչ մի կացութաձևի ավարտին բնորոշ արժեք չենք ստեղծել: Հայոց մշակույթի առանձնահատուկ կողմը անցումային դարաշրջաններին բնորոշ հախտուն պտթկումներն ու ստեղծագործական անակնկալ մեծագործություններն են: Հետևելով հասարակական-տնտեսական հաբաբերությունների հերքափոխի՝ նկատում ենք, որ հայ ժողովրդի պատմության այդ արմատական անցումային դարաշրջանները հետևյալներն են՝

Նախնադարյան համայնական հասարակարգից ստրկատիրականին անցումը կատարվել է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերս, ստրկատիրությունից ֆեոդալիզմին անցումը՝ մ. թ. 4-5-րդ դարերում, ֆեոդալիզմից կապիտալիզմին անցումը հայ իրականության մեջ 17-18-րդ դարերում, իսկ բուն Հայաստանում՝ 19-րդ դարի 2-րդ կեսին, և կապիտալիզմից սոցիալիզմին, ապա սոցիալիզմից կապիտալիզմին անցումը՝ արդի դարաշրջանում: Այս բո-

³ Տես Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Ա, Եր., 1985, էջ 50:

⁴ Տես Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, երկեր, հ. Ա, Եր., 1977, էջ 11:

⁵ Տես «Հայ ժողովրդի պատմություն» ութ հատորով, հ. 1, Եր., 1971, էջ 8:

որի մեջ խիստ առանձնանում են 10-14-րդ դարերը, որոնք զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան լինելով հանդերձ՝ բնորոշվում են վերածննդին առանձնահատուկ գծերով, որը նույնպես մի ինքնատիպ անցումային դարաշրջան է:

Անցումային այս դարաշրջաններում փոխվում են աշխարհայացքներն ու հավատալիքները, քաղաքական կառույցները, վերագնահատվում քառայական ու իրավական օրենքները, կերտվում հայ մշակույթի համագայից ու համամարդկայից զուլոգործոցները: Այս դարաշրջաններում կերտվում են նաև քաղաքագիտական մտքի կոթողային հուշարձաններ: Հայ քաղաքագիտական միտքը, ի տարբերություն ժողովրդական, սովորական մշակույթի, որը ստեղծվում է անընդհատ ու մեծ չափերով, որպես ազգային մշակույթի առավել քաղաքակիրթ ու էլիտար տեսակ մեզ ներկայանում է ընդհատում, առանձին առկայծումներն ու դրվագների ձևով: Առաջին դրվագը արարվում է 5-րդ դարում, երկրորդը՝ 10-14-րդ դարերում, երրորդը՝ 18-րդ դարում, չորրորդը՝ 19-րդ դարի 2-րդ կեսում, հինգերորդը՝ արդի դարաշրջանում՝ 1918 թ. մինչև այժմ՝ հայոց երեք հանրապետությունների շրջանում:

Այս դրվագների միջև ընկած ժամանակահատվածներում՝ 6-9-րդ, 14-17-րդ և այլ դարերում, ծանր ու մտայն վարագույր է իջնում հայոց հոգևոր մշակույթի քեմահարթակի վրա, հասարակական ու մշակութային կյանքը այնքան է ամլանում, նախորդ ու հաջորդ պատմաշրջանների միջև խզումն այնքան է խորանում, որ յուրաքանչյուր նոր վերելք սկսվելիս մեծ խնդիր է ծառանում՝ պեղել, գտնել ու վերականգնել անցյալի ազգային արժեքները և դարձնել ժողովրդի սեփականությունը: Թվում է, թե հայոց պատմությունը այս միև նույն խընդիրն է դրել Մեսրոպ Մաշտոցի ու Մովսես Խորենացու, Մխիթար Գոշի, Մովսես Բարսեղյանի ու Շահամիր Շահամիրյանի, Բաֆթու և մյուս մեծերի առաջ: Այդ խնդիրը նախընթաց դարաշրջանների մոռացված ազգային արժեքների հայտնագործումն է, ժողովրդի նիքիած ոգին արթնացնելն ու ազգային ինքնության ու արժանապատվության վերականգնումը:

Լինելով զարմանալի արգասավոր, ինքնատիպ ու ամբողջական դարաշրջաններ՝ նրանցում մի կողմից ամփոփվում ու ընդհանրացվում են նախընթաց ողջ ձեռքբերումները, մյուս կողմից՝ ուղենշվում ազգի զարգացման առաջընթացի մայրուղիները:

Հայ քաղաքագիտության մտքի զարգացման ընթացքի, հայոց պատմության անցումային դարաշրջաններով պայմանավորված, մեր առաջարկած այս պարբերացումը հիմնավորվում է նաև ազգային և համաշխարհային քաղաքակիրթ մշակույթների զարգացման հիմնական փուլերով: Քաղաքակրթություն և մշակույթ հասկացություններն այնքան սերտ են, որ նրանք հաճախ օգտագործվում են նույն նշանակությամբ: Ինչպես նշում է Գ. Մելքոնյանը, շատ բառաբաններում և գիտական հետազոտություններում «քաղաքակրթություն» հասկացությունը մեկնարանվում է որպես «մշակույթ» հասկացության հոմանիչ: Յուրաքանչյուր քաղաքակրթություն բնութագրվում է իրեն համապատասխան մշակույթով: Ֆրանսիացի փիլիսոփա-ուսավորիչները քաղաքակիրթ էին համարում այն հասարակությունը, որը հենվում է բանականության ու արդարության սկզբունքների վրա: Նրան ներհատուկ է որոշակի փիլիսոփայություն, հասարակայնորեն նշանակալի արժեքների ամբողջություն, յուրահատուկ ապրելակերպ, որի հիմքն են կազմում ժողովրդի ոգին, նրա բարոյականությունը, համոզմունքը¹:

Կենսական այս սկզբունքները միավորում են ոչ միայն առանձին ժողովրդի, այլ նաև տարբեր ժողովրդների, ապահովում նրանց միասնությունը որևէ կոնկրետ պատմաշրջանի ընթացքում, դրանով իսկ առաջ բերում քաղաքակրթության տարածաշրջանային ու համաշխարհային տեսակ՝ որպես մարդկության առաջադիմական զարգացման բարձրագույն մակարդակ: Պատմության փիլիսոփայության ճանաչված գիտակ Առնոլդ Տոյնբիքն մարդկության պատմության մեջ հաշվում է տասներեք «լուկա քաղաքակրթություններ», որոնցից մեզ հետաքրքրողներն են.

1. Արև մտաքրիստոնեականը (որի մեջ մտնում են Արև մտայն Եվրոպայի, Ամերիկայի, Ավստրալիայի երկրները, որտեղ տարածված է քրիստոնեությունը կաթոլիկական կամ բողոքականության ձևերով):
2. Ուղղափառ քրիստոնեական քաղաքակրթությունը ռուսական ճյուղով (իր մեջ ներառում է Արևելյան Եվրոպայի երկրները և Ռուսաստանը, որտեղ տարածված է ուղղափառությունը):

¹ Տե՛ս Գ. Մելքոնյան, Համաշխարհային և հայ մշակույթի տեսություն և պատմություն, Եր., 1997, էջ 46:

3. Իսլամականը (Հյուսիսային Աֆրիկայից մինչև Մերձավոր ու Միջին Արևելք):

Ա. Թոյնբին լոկալ քաղաքակրթություն է համարում նաև Հայաստանի միաբնակ քրիստոնեական համակարգը⁹:

Հայ իրականության մեջ դարեր շարունակ անգիջում պայքար է ծավալվել հենց այս քաղաքակրթությունների՝ հայ միաբնակ քրիստոնեության, արևմտաքրիստոնեության և իսլամական քաղաքակրթությունների միջև: Եվրոպայի և Ասիայի սահմանագլխին գտնվող Հայաստանում մշտապես քախվում էին այս աշխարհամասերի քաղաքակրթությունները:

Արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների առճակատումը սկզբնավորվեց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով և այնուհետև տարբեր մակարդակներով ու անվանումներով շարունակվեց հետագա դարերում:

Պատմական փաստերի ուսումնասիրություններից հանգում ենք այն եզրակացության, որ հայ ազգային մշակույթի գոյությունը ընդհանուր առմամբ արևմտյան քրիստոնեական և հայ միաբնակ քրիստոնեական քաղաքակրթությունների հաղթանակների դարաշրջաններում են կերտվել: 5-րդ դարի ողջ ձեռքբերումները խառնախառն են միաբնակ հայ քրիստոնեական և ուշ հելլենիզմի մշակույթի վրա: Հայաստանը այն սակավաթիվ երկրներից էր, որը գտնվելով անտիկ քաղաքակրթության ոլորտի մեջ՝ ոչ միայն պահպանեց այն, այլև ստեղծեց մի յուրօրինակ համադրություն, որը հասուկ է հայոց 5-րդ դարի մեծ թոխքին: Մտավորապես նույնպիսի թոխքներ են նկատվում 10-14-րդ դարերում, 18-րդ դարում, 19-րդ դարի 2-րդ կեսին և արդի դարաշրջանում:

Ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Գևորգյանը, ժողովրդի մշակույթը ծավալվում է իր ներքին հնարավորությունների ոլորտում և դրան չպիտանալով՝ ժողովրդային, ազգագրական կամ զանգվածային և քաղաքակիրթ ու էլիտար մակարդակներով¹⁰: Արևմտյան քաղաքակրթության հաղթանակների դարաշրջանում հայ իրականության մեջ պատմական նպաստավոր դրվագներում ստեղծվում են հայ մշակույթի քաղաքակիրթ և էլիտար մակարդակներ:

Ուշագրավ է այն երևույթը, որ հայ քաղաքագիտական միտքը և ս ներկայանում է հաջորդականության այնպիսի փուլերով, որպիսին են մարդկության առաջադիմական զարգացման սահմանագառաված փուլերը: Արևմտյան քաղաքակրթության զարգացման առանձնացված առավել ցայտուն փուլերից են՝ հելլենիզմի, վերածնունդի, լուսավորիչների դարաշրջանների քաղաքակրթությունները: Հայոց 5-րդ դարի մշակույթը համահնչուն է ուշ հելլենիզմի քաղաքակրթությանը, 10-14-րդ դարերին՝ վերածնունդի, 17-18-րդ դարերին՝ լուսավորիչների, 19-րդ դարի 2-րդ կեսը՝ ռուսական նարդոնիկական և հեղափոխական-դեմոկրատական մշակույթների: Հայերը ոչ թե համաշխարհային այդ մշակույթներն ընդօրինակողներ էին, այլ այդ ընդհանուր ոլորտի մեջ գտնվող ժողովուրդ, այդ մշակույթը ստեղծողներից ու զարգացնողներից մեկը:

Ցավով պետք է նշել, որ իսլամի քաղաքակրթության տիրապետության պատմաշրջաններում 6-9-րդ դարեր, 14-18-րդ դարեր և այլն, կործանվում է հայոց ազգային քաղաքակիրթ մշակույթը, և միայն ժողովրդի ներքին զերքնական ջանքերով ստեղծվում ժողովրդական համեստ մշակույթ, որում արտացոլվում է առօրյա դժոխական կյանքն ու կենսագործունեությունը:

Ճիշտ է ասված, որ եթե թուրք-սելջուկները պոկեցին Առաջավոր Ասիայի քաղաքակրթության ծառի ծաղիկը, ապա թաթար-մոնղոլները այդ ծառը չորացրին: Թաթարական լուծը ոչ միայն ճնշում, այլև սթոմոն ու հալումնաշ էր անում իր թի տակ գտնվող ժողովրդի ոգին:

Հայ քաղաքագիտական մտքի պատմությունը պարբերացման ենթարկելիս պետք է հաշվի առնել մի կարևոր գործոն և ս. դա հայկական տիրույթի առկայությունն է:

Աշխարհատիրույթ հայ գաղթավայրերի գոյությունը հայ ժողովրդի պատմությունն ամբողջացնող ու նրա առանձնահատկությունը բնութագրող կարևոր գործոններից է:

14-րդ դարից սկսած հայ ժողովրդի պատմությունը փոխաբխվում է օտարի տիրապետության տակ գտնվող և աշխարհով մեկ տիրված հայերի պատմությամբ: Այս մտայն ժամանակներում են ձևավորվել Աստրախանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Ղզարի, Մոզդոկի,

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 51:

¹⁰ Տե՛ս Հ. Գևորգյան, Ազգ. ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր., 1997, էջ 19:

Նոր Նախիջևանի, Ուկրաինայի, Մոլդովիայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Վարաքիայի, Հունգարիայի, Կ. Պոլսի, Չմյուտնիայի, Սիբիրիայի, Եգիպտոսի, Նոր Ջուդայի, Հնդկաստանի հայկական գաղթավայրերը: Ծաղկում ապրող գաղթօջախները դարձան հայկական մշակույթի, գիտության, կրթության կենտրոններ: Հայ զանգվածները, շփվելով հյուրընկալող ժողովուրդների հետ, հաղորդակցվելով մշակույթի համաշխարհային ձեռքբերումներին, հայրենիքից հեռու ստեղծեցին մշակույթի այնպիսի մնայուն արժեքներ, ինչպիսիք են հայկական առաջին տպագիր գիրքը, պարբերականը, քաղաքական ու հրատարակատեսական աշխատություններն ու ազգային-ազատագրության ծրագրերը¹¹: Հայ քաղաքագիտական մտքի զարգացման շարժարտը դրվագը՝ 18-րդ դարը, ամբողջովին արարվել է գաղթաշխարհում:

* * *

Հայ քաղաքագիտական միտքը բնականաբար կարող էր սկզբնավորվել ազգային գրի ու գրականության ստեղծման հետ: «Գիրք և նոքմավորված համընդհանուր գրական լեզուն,- նշում է ակադեմիկոս Հ. Գևորգյանը,- նախապայմանն են ազգային կյանքի ոչ միայն կրթական, գրական, պատմական, գիտական, դավանական ոլորտների համար, այլև գործնական՝ վաճառատեսական, իրավաբանական, օրենսդրական, դիվանագիտական ոլորտների, որոնք իրենց էությանը, իրենց կոչումով և իրենց գործառնության համար պահանջում են համընդհանրացում և միօրինականացում»¹²:

Այն վիսառը, որ հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը գրեր ստեղծեց նաև քախաակից վրացիների ու աղվանների համար, հայ գրերի ստեղծողին դարձնում է նաև հայոց առաջին մեծ քաղաքագետը: Նրա կողքին ու նրա շնորհիվ են հանդես գալիս հայ քաղաքակիրթ ու էլիտար մշակույթի ու քաղաքագիտական մտքի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Մովսես Խորենացին, Եգիիկ Կողբացին, Փավստոս Բուզանդը: Նրանք մշակեցին հայրենիքի ու հայրենասիրության, պետականության ու ազգային միասնության գաղափարը: Մարդու և քաղաքական գործչի, պետության ինքնիշխանության հարցերը դասական ձևակերպում առաջան Խորենացու կերտած «Հայոց պատմության» էջերում, որտեղ հայոց պատմությունը ներկայանում է անկախության ու ազգային պետականության համար մաքառող ժողովրդի կենսագրություն: Մարդու գնահատման խորենացիական չափանիշը մարդկանց միջև գոյություն ունեցող բոլոր տարբերությունները նրանց կատարած գործերով համամարդկային պահանջն է:

Այս բոլորը ծնունդ առան 5-րդ դարում և հետևանք էին 4-5-րդ դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական մեծ տեղաշարժերի: Սոցիալ-տնտեսական առումով այն ստրկատիրականից ֆեոդալական կացութաձև ին անցման մեծ ու հախտոն դարաշրջան էր, քաղաքական առումով՝ փոթորկահույզ իրադարձություններով լեցուն, մեծ, հաջող ու անհաջող պատերազմների ու մաքառումների դարաշրջան, քաղաքակրթական առումով՝ արևմտյան քրիստոնեական և արևելյան գրադաշտական քաղաքակրթությունների անգիջում քախման և արևմտյանի հաղթանակի դարաշրջան:

Հայոց հոգևոր և նյութական մշակույթի պատմության երկրորդ փուլը՝ 10-14-րդ դարերը, նույնպես ներկայանում է իբրև մի ամբողջական ու ինքնատիպ մակաբաղակ, շատ բարձր նախընթաց՝ պարսկա-արաբական (428-885 թթ.) տիրապետության պատմաշրջանից շատ ու շատ բարձր, նաև դրան հաջորդած թուրք-սելջուկյան, բաբար-մոնղոլական ու թուրք-պարսկական տիրապետությունների պատմաշրջաններին: Այս երկու մշալ ժամանակահատվածների արանքում վեր է խոյանում հայոց դասական միջնադարը՝ իր երեք ազգային պետություններով, հասարակական-քաղաքական ու գեղարվեստական մտքի անհաս գազաթներով:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների առումով այս դարաշրջանը ներկայանում է որպես զարգացած ֆեոդալիզմի մակաբաղակ, որում առկա են վերածննդի մշակույթին բնորոշ գծեր: Քաղաքական առումով դարձյալ քախվում են սոցիալական տարբեր խավեր, հասարակական հարաբերություններ, առաջադեմ ու հետադեմ ուժեր, հին ու նոր հայացքներ,

¹¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Եր., 1972, էջ 298:

¹² Հ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 19:

իրարամերժ գաղափարներ ու ճաշակներ, քաղաքակրթական առումով՝ քախվում են համաշխարհային քաղաքակրթություններ: Հաղթող է դառնում դարձյալ արևմտյան քաղաքակրթությունը, և ծնունդ են առնում մարդկային մտքի մեծագործություններ:

Եվրոպայում տեղի է ունենում մեծ առաջընթաց, միջնադարից անցում է կատարվում ժամանակակից իմաստով նոր՝ արևմտյան քաղաքակրթությանը: Այս մեծ անցման երևույթները դրսևորվում են նաև Հայաստանում, որի վրա էլ խարսխվում է այս ինքնատիպ պատմաշրջանի մեծ թռիչքը: Հոգևոր մշակույթի հստակագրում ստեղծվում են նաև քաղաքագիտական մտքի մնայուն հուշարձաններ, որոնց կարելի է քաժանել երկու խմբի՝ հայոց ներքին քաղաքական կյանքը կարգավորող ու լուսարանող հուշարձանների և արտաքին քաղաքական կյանքին նվիրված հուշարձանների:

Որպես ներքին կյանքին նվիրված հուշարձան՝ ամբողջանում և վերջնական տեսք է ստանում «Կանոնագիրք հայոցը», կերպվում են Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը: Արտաքին քաղաքական կյանքը կարգավորող ու լուսարանող հուշարձաններից աչքի են ընկնում «Գիրք թղթոց», «Կնիք հավատոյ», «Արմատ հավատոյ» ժողովածուները և դարաշրջանի հոգևոր ու աշխարհիկ մտավորականների այն երկերը, որոնցում արծարծվում են քաղաքագիտական հարցեր:

«Կանոնագիրք հայոցը» իրավագիտական փաստաթղթերի պաշտոնական ժողովածու է՝ քաղկացած հոգևոր-եկեղեցական, քարոյախրատական, գաղափարա-քաղաքական, տնտեսական հարաբերությունները սահմանող կանոնական հողվածներից: Մասնագետների կարծիքով այն առաջին Corpus juris Canonici-ին է իրավագիտության պատմության մեջ:

Միջնադարյան հայ քաղաքագիտական մտքի ամենախոշոր գործիչը Մխիթար Գոշն է: Հայոց միջնադարում չկա մի այլ գիրք, որը Գոշի «Դատաստանագրքի» պես բազմակողմանիորեն արտացոլի հայ հասարակական-քաղաքական հարաբերությունները: Ստեղծելով հայոց դատաստանագիրքը՝ Գոշը մի կողմից դառնում է ազգային ինքնագիտակցության վերականգնման դրոշակակիրը, մյուս կողմից հռչակում և ազգային ինքնագիտակցության վերականգնման համազգային պետականության կերտման համար: Արտաքին քաղաքական կյանքի կազմակերպման բնագավառի հուշարձանները հիմնականում վերաբերում են միաբնակ հայ եկեղեցական գործիչների երկարնակության դեմ մղած տեսական պայքարին:

Հայ քաղաքագիտական մտքի պատմության համար զնահատելի ժառանգություն են թողել Ներսես Ենոքիայի, Ներսես Լամբրոնացին, Վահրամ Բարսեղի, Հովհաննես Իմաստասերը, Պողոս Տարնացին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ:

Հայ քաղաքագիտական մտքի պատմության երբեքդ դրվագը՝ 18-րդ դարը, նույնպես առանձնանում է նախորդ և հաջորդ պատմաշրջաններից: Թեև Հայաստանը շարունակում էր մնալ թուրք-պարսկական ծանր լծի տակ, այնուամենայնիվ հայկական գաղթօջախներում ձևավորվեցին հասարակական-քաղաքական մտքի կենտրոններ, որոնցում Հայաստանը օտարների տիրապետությունից ազատագրելու և սեփական պետություն ստեղծելու ուղիներ էին որոնում:

Համակերպական ազգային-ազատագրական շարժումները և բուրժուական հեղափոխությունները իրենց շրջապատույտի մեջ են առնում հայ առաջավոր գործիչներին: Հետզհետե ձևավորվում է ազգային միասնության գիտակցությունը:

Հայ քաղաքագիտական մտքի այս նոր փուլում արդեն առաջադրված քաղաքական խնդիրների լուծման ճանապարհին ասպարեզ են մտնում հայ ժողովրդի պատմության նոր դարաշրջանի քաղաքագիտական միտքը կերտողներ Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Ծահաբի Ծահաբիյանը, Մովսես Բաղրամյանը և ուրիշներ: Առաջադրված խնդիրը հայրենիքն ազատագրելը և սեփական ազգային պետություն ստեղծելն էր և այս բոլորն ապահովող արտաքին հովանավոր ուժի ի հայտ բերումը, այսինքն՝ արտաքին քաղաքական ճիշտ կողմնորոշումը:

Իսրայել Օրին այս խնդրի լուծումն է վերջո կապեց Ռուսաստանի հետ, Հովսեփ Էմինը՝ հայ-վրացական համագործակցության, Մովսես Բաղրամյանը՝ ներքին ներուժի բացահայտման ու համախմբման հետ:

Հատկապես Մ. Բաղրամյանի «Նոր տեսրակը» դարագլուխ կազմող կորոնային հու-

շարժան է, առաջին իսկական քաղաքական երկը հայ իրականության մեջ: Այնտեղ Բաղրամյանը հայ երիտասարդությանը հորդորում է սքափվել թմրությունից, արիանալ և ստրկամտության ամոթն ու նախատիքը վերացնել, ոտքի կանգնել, համախմբվել իբրև վերածնվող ազգ և արյան գնով ձեռք բերել անկախություն: Հայ երիտասարդությանը խթանելու նպատակով պետում, գանում և ներկայացնում է հայոց պատմության անցյալի հերոսական ու արժանահիշատակ դրվագները: Հայոց պետականության կորստի գլխավոր պատճառը համարելով բռնապետությունը՝ Բաղրամյանը ուրվագծում է նաև ապագա ազատագրված հայրենիքում կերտվելիք ժողովրդավարական պետության գաղափարը:

Այս հիմնադրույթն առավել մանրամասն ու համակողմանի մշակվեց մի այլ կոթողային հուշարձանի՝ «Ռոզգայք փառացի» էջերում: Այստեղ Շահամիրյանը առաջադրում և լուծում է այնպիսի իրավաքաղաքական խնդիրներ, որոնք մինչև այդ եվրոպական մտածողների շքրջանում նոր էին միայն սկզբնավորվում: Դրանցից էին իրավունքի փիլիսոփայության այնպիսի կարևոր հիմնահարցեր, ինչպիսիք են իրավունքի, օրենքի և ազգային-ազատագրական պայքարի փոխհարաբերությունները:

18-րդ դարի քաղաքագիտական միտքը, որպես քաղաքակիրթ մշակույթի էլիտար մակարդակ, ծնունդն էր ժամանակի եվրոպական հեղափոխությունների, նրանց գաղափարախոսության ու լուսավորչիների տեսական ժառանգության, այստեղանդերձ այն խարսխված էր նաև հայ ժողովրդական, էթնիկական մշակույթի ձեռքբերումների վրա, որոնք դրսևորվեցին 18-րդ դարի առաջին 30-ամյակի ազգային-ազատագրական հերոսական կոիվների ու նրանց գաղափարախոսությունների տեսքով:

Հայ քաղաքագիտական մտքի պատմության չորրորդ դրվագը՝ 19-րդ դարի 2-րդ կեսը նույնպես սկզբունքորեն տարբերվում է իրեն նախորդող ու հաջորդող պատմաշրջաններից: Նախ՝ հասարակական-քաղաքական կյանքը ակտիվանում է բուն Հայաստանում: Գրքմի պատերազմից հետո Ռուսաստանում ճորատտիրական կարգերը արագորեն քայքայվում են: Սկսվում է անցում դեպի կապիտալիզմ: Համատ ու անզիջում գոտեմարտ է սկսվում հին ու նոր հասարակարգերի, ճաշակների, գաղափարների ու մշակույթների միջև, որն իր շքրջապտույտի մեջ է առնում նաև կայսրության գաղութների ու կիսագաղութների ժողովուրդներին: Այս ընդհանուր փոթորիկներին գումարվում են նաև ռուս-թուրքական երկու պատերազմները, որոնք առավել օրհասական են դարձնում Ռուսաստանի և Թուրքիայի լծի տակ հեծող հայ ժողովրդի վիճակը: Սան Ստեֆանոյի զինադադարի և Բեռլինի վեհաժողովի որոշումների՝ հայ ժողովրդին վերաբերող 16-րդ և 61-րդ հոդվածները դառնում են կախարդական այն առանցքը, որի շուրջը փոթորկվում են հայ կյանքը և նրա քաղաքագիտական միտքը:

Համաշխարհային իրադարձությունների կենտրոնը դառնում է Մերձավոր Արևելքը: Նոր փուլ է թևակոխում արևելյան հարցը, որի առանցքն են կազմում մի կողմից օսմանյան կայսրության մեջ մտնող ոչ թուրք ժողովուրդների պայքարը իրենց անկախության ու պետական ինքնությունության համար, մյուս կողմից՝ եվրոպական պետությունների գաղութացման քաղաքականության ուժեղացումը Մերձավոր Արևելքում: Որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, պատմական իրադարձությունների կիզակետում են հայտնվում Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Հայաստանում վերստին համաշխարհային ուժերի հետ բախվում են նաև համաշխարհային քաղաքակրթությունները: «Արևելյան խնդիրը,- գրում է Գրիգոր Արծրունին,- սլավոնության և ուղղափառության խնդիր չէ միայն, նա մինչև անգամ միմիայն քրիստոնեության խնդիր չէ, այլ ավելին, նա՝ քաղաքակրթության խնդիր է, քաղաքակրթական ցեղերի՝ բարբարոսության դեմ պայքարի խնդիր է- ասիական և սեմիտական ցեղերի պատերազմի խրոնիկը թուրանական ցեղերի դեմ»¹³:

Հայ ժողովրդի համար շատ դժվար էր գանել միջազգային մտք ու խրքին դիվանագիտական որոզայրների հանգույցները, քանի որ նրա քաղաքականությունն ու քաղաքագիտական միտքը կերտում էին մի քանի տասնյակ մտավորականներ՝ միավորված մի քանի համախոհ հոսանքների ու կուսակցությունների մեջ: Առավել աչքի ընկնող հոսանքներից էին կղերաֆեոդալականը, լիբերալ-բուրժուականը և հեղափոխական-դեմոկրատականը,

¹³ «Մշակ», 1877, թիվ 56:

իսկ կուսակցություններից՝ արմենականները, հնչակյանները և դաշնակցականները:

Հայ հասարակական-քաղաքական մտքի առավել պահպանողական քեզ՝ կղերաֆեոդալական հոսանքի ներկայացուցիչները, պահանջում էր, որ ազգը համակերպվի տիրող կարգերին և տիրապետողների ողորմածությամբ հասնի որոշ քարեփոխումների: Լիբերալ-բուրժուական հոսանքի ներկայացուցիչները հանդես էին գալիս հասարակական կյանքի եվրոպականացման ծրագրով, ազգային զարթոնքի՝ կրթության, լեզվի, գրականության և գիտության զարգացման նշանաբանով: Ժողովրդին կարող է ազատագրել հենց ինքը՝ ժողովուրդը, նրա կրթված ու կազմակերպված երիտասարդությունը:

Սուրբանական և ցարական բռնակալության լծից հայ ժողովրդի ազատագրության իրական ուժը հեղափոխական-դեմոկրատական հոսանքի պարագլուխ Մ. Նալբանդյանը համարում էր հայ գյուղացիությունը:

Հայ իրականության առաջին քաղաքական կուսակցությունը՝ արմենականները, ծրագրում էին հեղափոխական պայքարով Թուրքիայի հայության համար ձեռք բերել ինքնավարություն: Հնչակյանները արևմտահայության ազատագրությունը կապում էին մեծ տերությունների վարած քաղաքականության հետ, սակայն անհրաժեշտ էին համարում ստեղծել ապստամբական խմբեր, որոնք խաղաղ պայմաններում պաշտպանում էին հայ բնակչության անձն ու գույքը:

Հայ հեղափոխական դաշնակցությունը արևմտահայության ազատագրության գլխավոր միջոցը համարում էր զինված պայքարը:

Այս բոլոր ուղիները մշակվում էին տեսական ու հրապարակախոսական աշխատություններում, որոնք ինքնին ներկայանում են որպես քաղաքագիտական մտքի նվաճումների էլիտար մակարդակ:

Հայ քաղաքագիտական մտքի հինգերորդ դրվագը նույնպես ամբողջական ու առանձնահատուկ է: Հինգուկեսդարյա կորստից հետո ազգային վերակերպված պետականության անցած ուղին հարուստ է հախտուն անցումներով ու քախտումներով: Մոցիալ-ամենական հարաբերությունների առումով կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջան էր 1920-1930-ական թվականները, սոցիալիզմից կապիտալիզմին անցման շրջան՝ 1990-ական թվականները: Այս անցումները ուղեկցվում են գաղափարախոսությունների ու քաղաքակրթությունների քախտումներով: Խորհրդային իշխանության տարիներին կորցնելով միջազգային հարաբերություններում ու դիվանագիտական պրակտիկայում սուբյեկտի իր կարգավիճակը՝ Հայաստանը որպես տարածքային ինքնավարություն մտավ ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Իր իսկ ազգի քաղաքական կյանքից մեկուսացված հայ մտավորականը իրավունք չուներ նույնիսկ արծարծելու ազգապահպանության որևէ հրատապ հարց: Ազգային պահանջատիրության հարցը տեղափոխվեց հայկական տիրույթ, իսկ Հայաստանում շեշտը դրվեց անցյալի արժեքների փոյլադրելի չափով զննահատման, քաղաքական ու դիվանագիտական վավերագրերի հրատարակման ու գոյապահ պաշտպանման վրա: Այս առումով արժեքավոր են Մ. Ներսիսյանի և Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուները¹⁴:

Երբ 1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեով Հայաստանը դուրս եկավ ԽՍՀՄ-ի կազմից, վերականգնվեց հայոց ինքնիշխան հանրապետության քաղաքական սուբյեկտի կարգավիճակը: Թե՛ րան քաղաքական կյանքը, թե՛ քաղաքագիտական միտքը աշխուժացան: Քաղաքագիտական միտքը երբեմն հախտուն, չկշռադատված առաջադրեց այնպիսի սխալ ու ծայրահեղ տեսակետներ, ինչպիսիք էին՝ հավերժական քարեկամներ ու հավերժական բշնամիներ չկան, երրորդ ուժի քացառումը և այլն: Սակայն հանդես եկան նաև քաղաքագիտական մտքի այնպիսի նշանակալի աշխատություններ, ինչպիսիք Յու. Բարսեղովի¹⁵ ինքնորոշման իրավունքին նվիրված մենագրությունը, Հ. Գևորգյանի և Լ. Խորշոտյանի հայկական հարցին նվիրված աշխատությունները, որոնցում շոշափվում են

¹⁴ Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Մ. Ներսիսյանի խմբ., Եր., 1966, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Ջ. Կիրակոսյանի խմբ., Եր., 1972:

¹⁵ Տե՛ս Յու. Բարսեղով, Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պորթլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Եր., 1990:

ժողովրդների ինքնորոշման միջազգային իրավունքի, խաղաղության ու բարեկամության հարաբերակցության, հայկական հարցի պատմության ու տեսության, նույն հարցի ժամանակակից եվրոպական քաղաքագիտական տեսությունների քննադատության, հայ ժողովրդի՝ իր հայրենիքում շարունակաբար անկախ ու ինքնիշխան իրավունքի հիմնավորման հարցեր:

Այսպիսով, տեսնում ենք, որ իր պատմական հայրենիքում ապրող ու ստեղծագործող հայ ժողովրդի քաղաքագիտական միտքը, որպես մշակույթի բարձրագույն քաղաքակիրք մակարդակ, հանդես է գալիս դրվագներով՝ պայմանավորված պատմական նպատակով պայմաններով, սոցիալ-տնտեսական, քաղաքական ու քաղաքակրթական արմատական տեղաշարժերով ու բռնիքներով:

Г. Г. МАНУЧАРЯН. - К вопросу о периодизации истории армянской политологической мысли. - Цель статьи - представить принятые варианты периодизации истории армянской политологической мысли в сопоставлении с этапами развития мировой дипломатической мысли, показать путь развития армянской политологической мысли.

¹⁶ Տե՛ս Հ. Գևորգյան, նշվ. աշխ.:

¹⁷ Տե՛ս Լ. Խուրշույան, Հայկական հարցը, Եր., 1995: